



**ՀՖՖ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏՉԱԼԻ
ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
2020-2021թթ.**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....3

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....4

 Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները.....4

 Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները.....4

 Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը.....4

 Հոդված 4. ՀՖՖ գործառույթները.....5

 Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները.....5

 Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները և դիմելու կարգը.....6

 Հոդված 7. Պարգևատրումը.....6

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....7

 Հոդված 8. Մրցումների վայրը.....7

 Հոդված 9. Մրցումների անցկացման կարգը.....7

 Հոդված 10. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը.....8

 Հոդված 11. Խաղացանկը և անցկացման ժամկետները.....8

 Հոդված 12. Չկայացած և անավարտ խաղերը.....9

 Հոդված 13. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը.....10

 Հոդված 14. Վիճարկում.....10

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ.....11

 Հոդված 15. Սպասարկող անձնակազմի նշանակումը.....11

 Հոդված 16. Սպասարկման իրականացումը.....11

 Հոդված 17. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները.....12

 Հոդված 18. Սպասարկող անձնակազմի վարձատրությունը.....12

ԳԼՈՒԽ 3: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ և ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ.....12

 Հոդված 19. Ֆուտբոլիստների հայտավորումը.....12

ԳԼՈՒԽ 4: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....13

 Հոդված 20. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների մասնակցությունը.....13

ԳԼՈՒԽ 7: ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....14

 Հոդված 21. Վեճերի քննարկումը.....14

 Հոդված 22. Ծախսերը.....14

 Հոդված 23. Այլ հարցեր.....14



Հաստատված է ՀՖՖ փոխնախագահ Արմեն Նիկողոսյանի կողմից 15.01.2020 թ. -ին



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈՒԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
Ակումբ	Մարզական առումով ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնակարգերին և սահմանված նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցաշարերին կամ դրանց տարատեսակներին:
Պաշտոնական խաղեր	Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, մրցաշարեր, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումները:
Առաջնություն Ակումբի պաշտոնյա	Կանանց ֆուտզալի թիմերի միջև անցկացվող առաջնություն Ակումբի հաստիքային աշխատակից, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմ, ով հայտավորված է ՀՖՖ կանանց ֆուտզալի մրցումներին մասնակցելու նպատակով:
Խաղի կանոններ Մարզադահլիճ	Ֆուտզալ խաղի գործող կանոններ: ՀՖՖ-ի կողմից ընդունված մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտզալի հանդիպում:
Մրցավար 2-րդ Մրցավար Ժամանակաչափորդ Մրցավարի օգնական	ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման մրցավար: ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման 2-րդ մրցավար: ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման ժամանակաչափորդ: ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման մրցավարների օգնականներ (երրորդ մրցավար և ժամանակաչափորդ):
Հանդիպման մասնակից	Ֆուտզալիստ, ակումբի պաշտոնյա, հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար:
Արտակարգ իրավիճակներ/ Ֆորս-մաժոր	Անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված հանգամանքներ՝ երկրաշարժ, հրդեհ, պատերազմական գործողություններ, ազգային և առանձնակի ոլորտային գործադուլներ, պետական կառավարման մարմինների կողմից արգելող գործողություններ, համաճարակ, ջրհեղեղ, փոթորիկ, եղանակային վատ պայմաններ և այլ իրադարձություններ, որոնց գործողությունը հնարավոր չէ կանխարգելել, կանխատեսել և նախազգուշացնել:
Խաղի ժամանակահատված	Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից հետո ընկած ժամանակահատված:



ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող կանանց ֆուտզալի Մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է ֆուտզալի մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:

1.2 Կանոնակարգի խնդիրներն են՝

- ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության կարգերի սահմանումը,
- բ) Մրցումների մասնակիցների համար լիարժեք պայմանների ստեղծումը և ապահովումը,
- գ) Մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

2.1 Մրցումների նպատակն է՝

- ա) ՀՀ տարածքում կանանց ֆուտզալի հետագա զարգացմանը նպաստելը,
- բ) միջազգային մրցաշարերում Ազգային հավաքականի հաջող ելույթներին նպաստելը,

2.2 Մրցումների խնդիրներն են՝

- ա) Մ12, Մ15 և 15 տարեկանից բարձր խմբերի առաջնության թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների
- բ) Մրցումների մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝
 - Առաջնության ռմբարկու,
 - այլ մրցանակակիրներ

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը

ա) արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող կանանց ֆուտբոլի մրցումներին մասնակից ակումբների և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը կամ այդ արարքների մասին չհայտնելը:



Հոդված 4. ՀՖՖ գործառույթները

ՀՖՖ-ն իրականացնում է Մրցումների ընդհանուր ղեկավարումը և խաղերի կազմակերպումը, մասնավորապես՝

- ա) հաստատում է Մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,
- բ) իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
- գ) իրականացնում է թիմերի, դրանց ֆուտբոլիստների հայտավորումը,
- դ) հաստատում է Մրցումները սպասարկող մրցավարների կազմը,
- ե) կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
- զ) ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- է) հաստատում է Առաջնության արդյունքները և իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,
- ը) հոգում է թիմերի տրանսպորտային ծախսերը,
- թ) ապահովում է բժշկական ծառայության ներկայությունը,
- ժ) իրականացնում է Մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:

Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում սկումբների պարտականությունները

5.1 Մրցաշրջանի ընթացքում սկումբները պարտավոր են՝

ա) անշեղորեն հետևել սույն և ՀՖՖ այլ կանոնակարգերի դրույթներին և կատարել ՀՖՖ Գործադիր կոմիտեի, ՀՖՖ վարչական անձնակազմի և ՀՖՖ այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ կերպով ծանուցված որոշումները, շրջաբերականները: Պատշաճ է համարվում առձեռն՝ սկումբի ղեկավար անձնակազմի համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությամբ, փոստով, սկումբի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով կամ ՀՖՖ պաշտոնական վեբ կայքում (www.ffa.am) հրապարակման միջոցով ծանուցումը:

5.2 Ակումբները պատասխանատու են՝

- ա) խաղերի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության համար. արձանագրությունում նշված լինելը համարվում է մասնակցություն խաղին,
- բ) խաղի ժամանակահատվածում (թիմերի և պաշտոնյաների՝ մարզադահլիճ ժամանման պահից սկսած) և դրանից հետո իրենց ֆուտբոլիստների, վարչական անձնակազմի, ինչպես նաև իրենց երկրպագուների անօրինական, անթույլատրելի և անվայել գործողությունների համար,
- գ) մարզադահլիճում գտնվող հանդերձարանների, շինությունների և գույքի պատշաճ վիճակի պահպանման համար,
- դ) ՀՖՖ-ին ոչ հավաստի տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:

5.3 Ակումբներին արգելվում է՝

- ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ կատարել այնպիսի գործողություն, որը խոչնդոտում է կամ կարող է խոչնդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ կարող է ազդել խաղի ընթացքի կամ ելքի վրա,
- բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանշանը (լոգո)՝ բացառությամբ ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքերի,



զ) մրցումների շրջանակներում և հրապարակային գործողություններ կատարելիս օգտագործել ակումբի այնպիսի անվանում կամ խորհրդանշան (լոգո) (այդ թվում՝ կոմերցիոն գործընկերոջ անվանում), որը ՀՖՖ-ում գրանցված չէ տվյալ ակումբի անվամբ:

Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները և դիմելու կարգը

- 6.1 Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական և ֆիզիկական անձի կարգավիճակ, ընդունում են ՀՖՖ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, ՀՖՖ-ի նկատմամբ չունեն չկատարված պարտավորություն(ներ), այդ թվում՝ չվճարված տուգանք կամ չմարված կարգապահական տույժ, և պարտավորվում են կատարել վերոնշյալ կազմակերպությունների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:
- 6.2 Կանանց ֆուտզալի Մրցումներն ընդգրկում են
- ա) 15 տարեկան և բարձր խմբի առաջնություն
 - բ) Մ15 տ. խմբի առաջնություն
 - գ) Մ12 տ. խմբի առաջնություն
- 6.3 Առաջնության մասնակից ակումբները հաստատում են իրենց մասնակցությունը վերոնշյալ տարիքային խմբերի առաջնությանը մինչև 2020 թ. հունվարի 7-ը՝ առցանց լրացնելով ՀՖՖ-ի կողմից մշակված [դիմում-հայտը](#):

Հոդված 7. Պարգևատրումը

- 7.1 Կանանց ֆուտզալի Մրցումների ավարտից հետո ՀՖՖ-ն կազմակերպում և անցկացնում է պարգևատրման պաշտոնական արարողություն:
- 7.2 Կանանց ֆուտզալի առաջնության յուրաքանչյուր խմբի առաջին տեղը զբաղեցրած թիմերին շնորհվում է տվյալ մրցաշրջանի «Կանանց ֆուտզալի Հայաստանի չեմպիոն» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝
- ա) Առաջնության գավաթ,
 - բ) Կանանց ֆուտզալի Առաջնության յուրաքանչյուր խմբի առաջին, երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած թիմերի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են մեդալներով և ՀՖՖ դիպլոմներով:
- 7.3 Կանանց ֆուտզալի առաջնության լավագույն ումբարկուն պարգևատրվում է մրցանակով և ՀՖՖ դիպլոմով:
- 7.4 Ֆուտզալի մրցումների մասնակիցների համար ՀՖՖ նախագահի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:



ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 8. Մրցումների վայրը

- 8.1 Ֆուտզալի 15 տարեկանից բարձր խմբի խաղերը տեղի կունենան Երևանում և Մարտունիում, Դիլիջանում և Չարենցավանում:
- 8.2 Յուրաքանչյուր խաղի համար տվյալ մարզադահլիճի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը նախախաղային խորհրդակցության ժամանակ՝ հիմք ընդունելով ՀՖՖ կանանց ֆուտզալի առաջնության անցկացման կանոնակարգով:
- 8.3 Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադահլիճի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում, հանդիպման մրցավարը կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադահլիճում անցկացնելու կամ հետաձգելու վերաբերյալ՝ նախապես խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:

Հոդված 9. Մրցումների անցկացման կարգը

- 9.1 Առաջնությունն անցկացվում է շրջանային մրցակարգով 1 շրջանով: Թիմերի մեկնարկային դիրքը մրցաշարային աղյուսակում որոշվում է վիճակահանությամբ: Վիճակահանությունը կազմակերպվում է ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից և անցկացվում է առաջնությունը սկսելուց առնվազն 5 օր առաջ:
 - ա) 15 տ. բարձր խմբում հանդիպումները կանցկացվեն 2 կենտրոնով. Մարտունի քաղաքում մեկ խմբով և Երևանում՝ 3 ենթախմբով: Յուրաքանչյուր ենթախմբի հաղթող է ճանաչվում առավելագույն միավորներ վաստակած թիմը: 15 տ. բարձր խմբի հաղթողը որոշվելու է կիսաեզրափակչի և եզրափակչի արդյունքում: Երևանում հանդես եկող առաջին ենթախմբի հաղթողը կիսաեզրափակչում կմրցի երրորդ ենթախմբի հաղթողի հետ, իսկ երկրորդ ենթախմբի հաղթողը Գեղարքունիքի մարզի հաղթողի հետ: Հաղթող թիմերը իրար հետ կմրցեն եզրափակչում՝ մրցաշարի առաջին և երկրորդ տեղի համար, իսկ կիսաեզրափակչում պարտություն կրած թիմերը կպայքարեն երրորդ տեղի համար:
 - բ) Մինչև 15 տ. խմբում հանդիպումները կանցկացվեն 4 կենտրոնով՝ Դիլիջանում, Չարենցավանում, Մարտունիում և Երևանում: Յուրաքանչյուր ենթախմբի հաղթող է ճանաչվում առավելագույն միավորներ վաստակած թիմը: Կիսաեզրափակչում Տավուշի մարզում հանդես եկող խմբի հաղթող թիմը կմրցի Գեղարքունիքի մարզում հանդես եկող խմբի հաղթողի հետ, իսկ Երևանում հանդես եկող խմբի հաղթողը Չարենցավանի հաղթողի հետ: Հաղթող թիմերը իրար հետ կմրցեն եզրափակչում՝ մրցաշարի առաջին և երկրորդ տեղի համար, իսկ կիսաեզրափակչում պարտություն կրած թիմերը կպայքարեն երրորդ տեղի համար:
 - գ) Մինչև 12 տ. խմբում հանդիպումները կանցկացվեն 3 կենտրոնով՝ Դիլիջանում, Չարենցավանում և Երևանում: Յուրաքանչյուր ենթախմբի հաղթող է ճանաչվում առավելագույն միավորներ վաստակած թիմը: Կիսաեզրափակչում Տավուշի մարզում հանդես եկող խմբի հաղթող թիմը կմրցի Երևանի մարզում հանդես եկող խմբի հաղթողի հետ, իսկ Չարենցավանում հաղթող ճանաչված թիմը երկրորդ լավագույն արդյունքն ցույց տված թիմի հետ: Հաղթող թիմերը իրար հետ կմրցեն եզրափակչում՝ մրցաշարի



առաջին և երկրորդ տեղի համար, իսկ կիսաեզրափակչում պարտություն կրած թիմերը կպայքարեն երրորդ տեղի համար:

* Կիսաեզրափակչի, եզրափակչի և երրորդ տեղի համար բոլոր խաղերը կկայանան Երևանում:

9.2 Սույն կանոնակարգով սահմանված Կանանց Մրցումների շրջանակներում հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ֆուտզալ «Խաղի կանոնների» և սույն կանոնակարգի:

9.3 15 տարեկանից բարձր և Մ15 տարեկանների առաջնությունում խաղը բաղկացած է 20 րոպե խաղաժամանակով երկու խաղակեսից և խաղակեսի միջև ընկած մինչև 15 րոպե ընդմիջումից:

9.4 Մ12 տարեկան խմբի առաջնությունում խաղը բաղկացած է 15 րոպե խաղաժամանակով երկու խաղակեսից և խաղակեսի միջև ընկած մինչև 15 րոպե ընդմիջումից:

9.5 Խաղի սպասարկումն իրականացնում է ՀՖՖ Մրցավարական բաժնի կողմից նշանակված մրցավարները:

9.6 Ֆուտզալի առաջնության շրջանակներում ֆուտբոլիստների և պաշտոնյաների ստացած դեղին և կարմիր քարտերը չեն պահպանվում (փոխանցվում) կանանց ֆուտբոլի այլ առաջնություններում:

Հոդված 10. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

10.1 Թիմերը մրցաշարային աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղում հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

10.2 Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը հավակնորդ թիմերի միջև խաղերում՝

- ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
- բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,
- դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
- ե) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- զ) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ կարմիր քարտ,
- է) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ դեղին քարտ,
- ը) վիճակահանությամբ:

Հոդված 11. Խաղացանկը և անցկացման ժամկետները

11.1 Առաջնությունը սկսելուց նվազագույնը 3 օր առաջ ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժինը հաստատում է Առաջնության խաղացանկերը:

11.2 Խաղացանկերը կազմվում են Բերգերի համակարգով:

11.3 Առաջնության անցկացման ժամկետը՝ հունվարի 9-ից մինչև փետրվարի 21-ը:



Հոդված 12. Չկայացած և անավարտ խաղերը

12.1 Անավարտ կամ չկայացած են համարվում այն խաղերը, որոնք ընդհատվել և չեն շարունակվել կամ չեն կայացել հետևյալ պատճառներով՝

- ա) եղանակային պայմանների,
- բ) ֆորս-մաժորային իրավիճակ,,
- գ) թիմ/եր/ի խաղադաշտը լքելու,
- դ) երրորդ անձանց միջամտության դեպքում, որն էականորեն խոչնդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- ե) մեկ կամ երկու թիմերի ֆուտբոլիստների, պաշտոնյաների և/կամ երկրպագուների անկարգապահ վարքագծի դեպքում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- զ) հասարակական կարգի այնպիսի խախտում, որը անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,
- է) թիմի կազմում 3-ից պակաս ֆուտբոլիստների առկայության դեպքում,
- ը) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի մեկնարկը, ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա:
- թ) այլ սուբյեկտիվ հանգամանքների առկայության պարագայում:

12.2 Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել ու չի շարունակվել սույն հոդվածի «ա», «բ» կետերի հիմքով՝ անկախ ակումբների կամ նրանց պատասխանատվության տակ գտնվող անձանց կամքից, ապա այն տեղի է ունենում կամ շարունակվում է հաջորդ օրը՝ խաղի ընդհատման բույեին հաջորդող բույեից: Եթե հանդիպումը չի կարող նշանակվել հաջորդ օրը, ապա ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը նշանակում է հանդիպումը մեկ այլ օր:

12.3 Եթե մրցավարը որոշել է կանգնեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում.

- ա) Խաղի արձանագրությունում պետք է լինեն միայն խաղացողները և պաշտոնյաները, որոնք հանդիպման դադարեցման պահին գտնվել են խաղադաշտում և/ կամ պահեստայինների նստարանին: Բացառություն են կազմում այն խաղացողները և պաշտոնյաները, որոնք հանդիպման դադարեցման պահին փոխարինվել են կամ հեռացվել: Հանդիպման դադարեցման պահին խաղադաշտում գտնված խաղացողները չպետք է նշվեն արձանագրության մեջ որպես պահեստային խաղացող, երբ հանդիպումը վերսկսվի:
- բ) Բոլոր կարգապահական տույժերն ու պատժամիջոցները, որոնք եղել են մինչ հանդիպման դադարեցումը, մնում են անփոփոխ:
- գ) դադարեցումը, չեն հաշվարկվում դեղին քարտերի հաշվարկում, քանի դեռ հանդիպումն ամբողջությամբ չի ավարտվել:

12.4 Սույն հոդվածի մյուս բոլոր կետերով ամրագրված դեպքերում խաղն ընդհատվելու կամ չկայանալու պարագայում արդյունքը չեղյալ է համարվում: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-5 հաշվով, իսկ մրցակցին՝ հաղթանակ 5-0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-5 հաշվով: ՀՖՖ Կարգապահական կոմիտեն իրավասու է սահմանել այլ պատժամիջոցներ ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի շրջանակներում:

12.5 Եթե անվայել վարքագիծ է դրսևորվել երկու թիմերի ֆուտբոլիստների կողմից, ապա



խաղի արդյունքը չեղյալ է համարվում, և այդ դեպքում խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:

12.6 Չեղյալ համարված արդյունքների դեպքում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:

12.7 Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել որպես որակագրկույունը մարելու միջոց:

12.8 Ֆուտբոլիստների և ակումբի պաշտոնյաների որակագրկույունները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ:

12.9 Սույն հոդվածի 12.1 մասում նշված որևէ հիմքով ընդհատված, սակայն 15 րոպեի ընթացքում վերսկսած և բնականոն ընթացքով շարունակված խաղը անավարտ խաղ չի համարվում: Այդ խաղը վերսկսվում է ընդհատման րոպեին հաջորդող րոպեից, և խաղի շարունակության ժամանակ գործում են այն բոլոր կարգավորումները և կանոնները, որոնք կգործեն չընդհատված խաղի դեպքում: Այդ խաղի արձանագրությունում նշում է կատարվում խաղի ընդհատման պատճառի, ընդհատման և վերսկսման ժամերի, ինչես նաև մրցավարի կողմից կարևոր համարվող այլ հանգամանքների մասին:

Հոդված 13. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը

13.1 Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադահլիճ խաղի նշանակված ժամից նվազագույնը 30 րոպե առաջ:

13.2 Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե մրցավարին չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկզբը կարող է հետաձգվել առավելագույնը 30 րոպեով, որի մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:

13.3 Սույն կանոնակարգի դրույթների պարբերաբար խախտման, ՀՖՖ որոշումների չկատարման և իր գործողություններով կամ անգործության հետևանքով ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ հիմնարար սկզբունքների ոտնահարման պարագայում թիմը կարող է հեռացվել տվյալ առաջնությունից ՀՖՖ Կարգապահական կոմիտեի որոշմամբ ՀՖՖ Կարգապահական կանոնակարգով սահմանված կարգով:

13.4 Եթե ՀՖՖ Կարգապահական կոմիտեի կողմից առաջնությունից հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա խաղերի արդյունքները չեղյալ են համարվում: Հակառակ պարագայում անցկացված խաղերի արդյունքները մնում են ուժի մեջ, իսկ այն թիմերին, որոնց հետ չեն կայանալու տվյալ առաջնությունում մնացած բոլոր հանդիպումները, գրանցվում է տեխնիկական հաղթանակ 0:5 հաշվով:

Հոդված 14. Վիճարկում

14.1 Ակումբները կարող են վիճարկել «Ֆուտզալ խաղի կանոնների» կամ սույն կանոնակարգի դրույթների այնպիսի խախտումը, որն ազդել է խաղի ելքի վրա:

14.2 Խախտման վիճարկումը գրանցելու համար ակումբի լիազորված անձը խաղից առավելագույնը 30 րոպե հետո պետք է պաշտոնապես դիմի խաղի մրցավարին և լրացնի խաղի արձանագրության համապատասխան բաժինը՝ ներկայացնելով



վիճարկման հիմքերը, այն է՝ որ խախտումն է վիճարկվում և ում կողմից է այն կատարվել: Մրցակից թիմի ներկայացուցիչը ևս պետք է տեղեկացված լինի ներկայացված բողոքի մասին:

- 14.3 Սույն հոդվածի 14.2 մասով սահմանված կարգով վիճարկումը գրանցելուց հետո ակումբը 24 ժամվա ընթացքում ՀՖՖ պաշտոնական էլեկտրոնային փոստին է ներկայացնում տվյալ խախտման վերաբերյալ հիմնական վիճարկումը և վիճարկման տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
- 14.4 Վիճարկման տուրքը (այսուհետ՝ Տուրք) յուրաքանչյուր վիճարկվող խախտման համար կազմում է 5,000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՖՖ հաշվեհամարին՝ բանկային փոխանցման միջոցով:
- 14.5 Այն վիճարկման դիմումը, որը չի գրանցվել սույն հոդվածի 18.02 և/կամ 18.03 մասերին համապատասխան թողնվում է առանց քննության:
- 14.6 Վիճարկումը քննարկվում է ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից՝ էլեկտրոնային փոստի միջոցով վիճարկումը և Տուրքի անդորրագիրը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում: Վիճարկման քննության արդյունքում ընդունվում է որոշում, որն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է վիճարկումը ներկայացրած ակումբին և մրցակից ակումբին:
- 14.7 Յուրաքանչյուր խախտման մասով վիճարկումը ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից բավարարելու դեպքում վերադարձվում է այդ խախտման համար վճարված Տուրքի գումարը՝ 5.000 ՀՀ դրամ:

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հոդված 15. Սպասարկող անձնակազմի նշանակումը

- 15.1 Առաջնության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող խումբ հետևյալ կազմով՝ 15 տարեկանից բարձր և Մ15 տարեկանների խումբ՝ մրցավար, 2-րդ մրցավար, ժամանակաչափորդ, Մ12 տարեկանների խումբ մրցավար, 2-րդ մրցավար:
- 15.2 Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը, խաղից հետո տեղի ունեցած արտառոց դեպքերի մասին մրցավարական խմբի անդամները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել զեկուցագրեր ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա 13:00-ն:
- 15.3 Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:

Հոդված 16. Սպասարկման իրականացումը

- 16.1 Խաղերի սպասարկումն իրականացվում է համաձայն IFAB-ի կողմից ընդունված «Ֆուտզալ խաղի կանոնների», ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:
- 16.2 Մրցավարների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Ֆուտզալ խաղի կանոնների», սույն Կանոնակարգի դրույթների և մրցավարությունը կանոնակարգող՝ ՀՖՖ-ի այլ փաստաթղթերի համաձայն:



Հոդված 17. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

- 17.1 Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղին մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից ակումբներից որևէ մեկի հետ, և/կամ իջևանել միասին:
- 17.2 Գլխավոր մրցավարը պատասխանատու է արձանագրություններում նշված ֆուտբոլիստների անձերի ինքնության հաստատման համար:
- 17.3 Խաղից 30 րոպե առաջ գլխավոր մրցավարը կազմակերպում է նախադադային խորհրդակցություն թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ հաստատվում են խաղի գնդակները, թիմերի հանդերձանքները և քննարկվում խաղի կազմակերպման ու անցկացման հետ կապված այլ հարցեր:
- 17.4 Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ խաղն անցկացնելու համար:

Հոդված 18. Սպասարկող անձնակազմի վարձատրությունը

- 18.1 Մրցավարների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարում է ՀՖՖ-ն:
- 18.2 Չկայացած և անավարտ խաղերի մրցավարների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

ԳԼՈՒԽ 3: ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 19. Ֆուտբոլիստների հայտավորումը

- 19.1 Մասնակից թիմերի կազմում թույլատրվում է հայտավորվել մինչև 3 պաշտոնյայի և մինչև 20 ֆուտբոլիստի:
- 19.2 Հայտավորման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
 - ա) ակումբները հայտավորման փաստաթղթերը ուղարկում են ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժնի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ womens@ffa.am:
 Ֆուտբոլիստին կամ պաշտոնյային հայտից հանելը կատարվում է առաջնության ընթացքում՝ ակումբի ղեկավարի կողմից ստորագրված հայտից հանելու դիմումի համաձայն, որին անհրաժեշտ է կցել հայտից հանվող պաշտոնյայի անձնական քարտը:
- 19.3 Հայտավորման ժամկետը սահմանվում է պաշտոնական առաջին խաղից 5 օր առաջ և ավարտվում է 1 օր առաջ:



ԳԼՈՒԽ 4: ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 20. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների մասնակցությունը

- 20.1 Ֆուտբոլիստները մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի անձնագրով կամ քաղաքացիական անձնագրով, իսկ պաշտոնյաները՝ մասնակցի քարտով, բացառության կարգով ՀՖՖ կանանց ֆուտբոլի բաժնի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթով:
- 20.2 Թիմերի ներկայացուցիչները խաղակազմից ոչ ուշ, քան 15 րոպե առաջ մրցավարին հանձնում են խաղի արձանագրությունը, որտեղ յուրաքանչյուր թիմում պետք է նշված լինեն առավելագույնը թիմի 14 **ֆուտզալիստներ (5 հիմնական և 9 փոխարինող (պահեստային))** ՀՖՖ-ի կողմից տրամադրված ֆուտբոլային անձնագրերի անձնական համարները, մարզաշապիկի համարները, անունները, ազգանունները, ինչպես նաև պաշտոնյաների՝ ՀՖՖ-ի կողմից տրամադրված պաշտոնյաների քարտերը, քարտերի անձնական համարները, անունները և ազգանունները: Թիմի կազմը պետք է վավերացված լինի ակումբի իրավասու պաշտոնյայի կողմից: Ֆուտբոլիստների անձնագրերը և պաշտոնյաների մասնակցի քարտերը խաղից հետո վերադարձվում են ակումբների ներկայացուցիչներին:
- 20.3 Խաղին կարող են մասնակցել միայն խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները:
- 20.4 Թիմերի մարզիչները իրավունք ունեն հանդես գալու որպես ֆուտբոլիստ:
- 20.5 Խաղի արձանագրության մեջ լրացվում են այն ֆուտբոլիստների տվյալները, ովքեր հայտավորված են, ինչպես նաև որակագրված չեն մասնակցելու տվյալ խաղին:
- 20.6 Կանանց ֆուտզալի առաջնությունում օտարերկրացի ֆուտբոլիստների մասնակցությունը չի արգելվում:
- 20.7 Արձանագրության մեջ նշված ֆուտբոլիստներից առավելագույնը 5-ը կարող է լինել օտարերկրացի:
- 20.8 Սույն կանոնակարգի շրջանակներում Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների քաղաքացիները, չեն համարվում օտարերկրյա ֆուտբոլիստներ:
- 20.9 15 տարեկանից բարձր խմբի խաղերին մասնակցելու իրավունք ունեն 15 տարեկանը լրացած և բարձր ֆուտբոլիստներ:
Մ15 տարեկանների առաջնության խաղերին կարող են մասնակցել 2006, 2007, 2008 թվականներին ծնված ֆուտբոլիստները:
Մ12 տարեկանների առաջնության խաղերին կարող են մասնակցել 2009, 2010, 2011 և 2012 թվականներին ծնված ֆուտբոլիստներ:
- 20.10 Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու և պահեստայինների նստարանին նստելու իրավունք ունեն միայն խաղի արձանագրությունում նշված անձինք:



ԳԼՈՒԽ 5: ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 21. Վեճերի քննարկումը

12.1 Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը քննարկվում և վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում՝ համաձայն ՀՖՖ Կանոնադրության:

Հոդված 22. Օախսերը

22.1 Հայաստանի մարզերից մասնակից բոլոր թիմերի ճանապարհածախսը փոխհատուցում է ՀՖՖ-ն:

Հոդված 23. Այլ հարցեր

23.1 Ֆուտբոլիստների կարգավիճակը և տեղափոխությունները կարգավորվում են «ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգով:

23.2 Սույն Կանոնակարգի դրույթ/ներ/ի խախտումը (չկատարումը) առաջացնում է պատժամիջոցներ և/կամ տուգանքներ՝ համաձայն «ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի»:

23.3 Մրցավարությունը կոպիտ սխալներով անցկացնելու դեպքում սպասարկող անձնակազմի սխալ/ներ/ թույլ տված անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատժամիջոցներ՝ համաձայն ՀՖՖ-ի՝ մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի:

23.4 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև առաջնության ավարտը:



ՀՖՖ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԶԱԼԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Էդգար Մանուկյան
Աննա Թադևոսյան
Գործադիր կոմիտեի անդամ
Լիլիթ Մուրադյան

ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար
Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեի նախագահ, ՀՖՖ

ՀՖՖ Կանանց ֆուտբոլի բաժնի պետ